

Երևանի պետական համալսարանում գործող  
ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին  
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,  
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)

## ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավառյանի ժԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ Կարեն Արտակի Մելիքսերյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների մարմինների համակարգը և պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է վենչուրային բաժնետիրական ընկերություններին՝ դրանց օրինակով անդրադառնալով նաև բաժնետիրական ընկերությունների ոլորտում առկա մի շարք խնդիրներին:

ՀՀ-ում առկա չեն վենչուրային ընկերությունները համապարփակ իրավական կարգավորում: Որոշ իրավական ակտերում, օրինակ՝ «Քննվացիոն գործունեության պետական աջակցության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքներում առկա են վենչուրային գործունեության վերաբերյալ հիշատակումներ, սակայն դրանք հպանացիկ են և չեն տալիս նման ընկերությունների կարգավորման վերաբերյալ ամբողջական պատկերացում:

Դրա հետ մեկտեղ ՀՀ մի շարք իրավական ակտեր վենչուրային ընկերությունների գարգացումը դիտում են որպես առաջնություն: Այսպես, «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը վենչուրային հիմնադրամների ստեղծումը դիտում է

որպես ՀՀ-ում արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման հիմնական ուղղություններից մեկը, իսկ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը վենչուրային և օտարերկրյա ներդրումների խթանումը և ներգրավումը ներկայացնում է որպես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պետական աջակցության նպատակներից մեկը:

Այս տեսակետից վենչուրային ընկերությունների նկարագրությունը և դրանց առանձնահատկությունների բացահայտումն արդիական է:

Հեղինակը կատարել է հետաքրքիր, խորը, համապարփակ հետազոտություն: Հետազոտությունն իրականացնելիս ուսումնասիրվել է մեծածավալ գրականություն: Աշխատանքում առկա են բազմաթիվ արժեքավոր հետևություններ, մտահանգումներ և տեղեկություններ:

Մասնավորապես, պարագրաֆ 1.1.-ում հեղինակն ուսումնասիրում է կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հասկացությունը, հատկանիշները և վենչուրային բաժնետիրական ընկերությունները որպես կորպորատիվ տիպի իրավաբանական անձի ինքնուրույն տեսակ: Այս պարագրաֆում հեղինակը նախ ներկայացնում է «կորպորացիա» եզրույթը, նշում, որ առանձնանում են կորպորատիվ տիպի և ոչ կորպորատիվ (ունիտար) տիպի իրավաբանական անձինք: Այսուհետև ներկայացվում են կորպորացիայի տեսակների դասակարգումները կախված որոշակի հատկանիշներից: Հաշվի առնելով արտասահմանյան պրակտիկան և վենչուրային գործունեության առանձնահատկությունները՝ հեղինակն առաջարկում է ՀՀ-ում ներդնել ընկերությունների նոր, հատուկ տեսակ՝ վենչուրային բաժնետիրական ընկերություն:

Պարագրաֆ 1.2.-ում քննարկվում է ժողովի կարգավիճակը որպես վենչուրային բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմին: Այս հատվածում հեղինակը քննարկում է ժողովի կարգավիճակը: Ներկայացվում է ժողովի հրավիրման պարբերականությունը, բացառիկ և ոչ բացառիկ լիազորությունները, որոշումների ընդունման ընթացակարգերը, դրանց ուժի մեջ մտնելու հարցը: Այսուհետև ներկայացվում են այն առանձնահատկությունները, որոնք ունեն վենչուրային ընկերությունը, մասնավորապես, բաժնետոմսերի լիկվիդացիոն արտոնությունը, հատուկ նախապատվության իրավունքը, արտոնյալ դիվիդենտ ստանալու իրավունքը և այլն: Ամփոփելով պարագրաֆը՝ հեղինակը նշում

է, որ վենչուրային բաժնետիրական ընկերության բարձրագույն կառավարման մարմինը ժողովն է, որը կազմված է բաժնետերերից, ներառյալ՝ վենչուրային ներդրողներից, և որի իրավասության ներքո են գտնվում օրենսդրությամբ, հիմնադրի, ներքին և/կամ այլ փաստաթղթերով իր իրավասությանը վերապահված հարցերի լուծումը և որոշումների ընդունումը:

Պարագրաֆ 1.3.-ում ներկայացվում է խորհուրդը որպես վենչուրային բաժնետիրական ընկերության ընդհանուր դեկավարումն իրականացնող մարմին: Նշվում է, որ առանձնացնում են կորպորատիվ կառավարման երկու հիմնական մոդել՝ առութայիներական և ինսայդերական: Նկարագրվում են տարբեր երկրներում կիրառվող խորհրդի հստական լիազորությունների իրականացման կառուցակարգերը: Քննարկվում են հետևյալ հարցերը՝ արդյոք հնարավոր է մեկ մարմնի լիազորություններում միավորել և՛ կառավարման, և՛ հսկողական գործառույթները, խորհրդի իրավասությունները, խորհրդի անդամների և ընկերության միջև հարաբերությունների բնույթը, անկախ անդամների կարգավիճակը, խորհրդի անդամի լիազորությունների դադարեցումը: Այնուհետև, հեղինակը քննարկում է վենչուրային ընկերությունների առանձնահատկությունները՝ եզրակացնելով, որ խորհուրդը վենչուրային ընկերության ընդհանուր դեկավարումն իրականացնող մարմին է, որը ձևավորվում է ժողովի կամ վենչուրային ներդրողների կողմից վերջինների համաձայնությամբ/հաստատմամբ և իրականացնում է օրենսդրությամբ, վենչուրային ընկերության հիմնադրի, ներքին և/կամ այլ փաստաթղթերով իր իրավասությանը վերապահված հարցերի լուծումը և կամ որոշումների ընդունումը:

Պարագրաֆ 1.4.-ում հեղինակը քննարկում է վենչուրային բաժնետիրական ընկերության ընթացիկ դեկավարումն իրականացնող մարմնին՝ գործադիրին: Նախ, ներկայացվում է գործադիր մարմնի կարգավիճակն ընդհանրապես բոլոր բաժնետիրական ընկերությունների համար: Հեղինակը բացահայտում է «ընթացիկ» և «քննականոն տնտեսական» գործունեության հասկացությունները, գործադիր մարմնի ներքին և արտաքին լիազորությունները, միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմնի կարգավիճակը, գործադիր մարմնի հետ կնքվող պայմանագրի բնույթը, նրա նկատմամբ գործուն վերահսկողության հարցը, ընկերության և կառավարող կազմակերպության միջև կնքվող պայմանագրի իրավական բնույթը, գործադիր մարմնի տեղակալների կարգավիճակը: Այնուհետև քննարկվում է գործադիր մարմնի առանձնահատկությունները վենչուրային ընկերությունների համար: Մասնավորապես նշվում է,

որ դրանց համար կարող է նախատեսվել հատուկ գործադիր մարմին մեկ կամ մի քանի դեկավարներով: Ամփոփելով պարագրաֆը՝ հեղինակը նշում, որ գործադիր մարմինը վենչուրային ընկերության ընթացիկ դեկավարում իրականացնող միանձնյա և/կամ կուեզիալ մարմին է, որը ձևավորվում է ժողովի կամ խորհրդի կամ վենչուրային ներդրողների կողմից կամ վերջինների համաձայնությամբ/հաստատմամբ և իրականացնում է օրենսդրությամբ, վենչուրային ընկերության հիմնադիր, ներքին և/կամ այլ փաստաթղթերով իր իրավասությանը վերապահված հարցերի լուծումը և որոշումների ընդունումը:

Պարագրաֆ 2.1.-ում նկարագրվում է վենչուրային բաժնետիրական ընկերության կառավարման մարմինների պատասխանատվության հասկացությունը, հատկանիշները և առանձնահատկությունները: Հեղինակը նկարագրում է կորպորատիվ պատասխանատվության՝ որպես քաղաքացիական պատասխանատվության հատուկ տեսակի առանձնացման չափանիշները, տալիս է բարեխղճության և ողջամտության եզրույթների բացատրությունը: Ներկայացվում են պատասխանատվության պարտադիր պայմանների առանձնահատկությունները կորպորատիվ հարաբերությունների համար՝ պարտապանի ոչ իրավաչափ վարքագիծ, վնասների առկայություն, վնասների և ոչ իրավաչափ վարքագծի միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ամփոփելով պարագրաֆը՝ հեղինակն առաջարկում է վենչուրային ներդրողների մասով նախատեսել պատասխանատվության հատուկ միջոցներ՝ վերջինների հատուկ իրավունքների, արտոնությունների և/կամ առավելությունների սահմանափակումը կամ դրանցից զրկումը:

Պարագրաֆ 2.2.-ում քննարկվում են վենչուրային բաժնետիրական ընկերությունը հսկող անձանց պատասխանատվության առանձնահատկությունները: Այս պարագրաֆում հեղինակը քննարկում է դրստր և կախյալ (հսկող և հսկվող) կորպորացիաների պատասխանատվության բնութագրից գծերն ու հատկանիշները: Նշում է, որ դրստր ընկերությունների վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորումներում առկա է որոշակի անհամապատասխանություն՝ կապված ընկերության որոշումները օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշելու հնարավորություն ընձեռելու և պարտադիր ցուցումներ տալու իրավունքի հետ: Քննարկվում են հիմնական ընկերության համապարտ պատասխանատվության պայմանները, ներկայացվում է «կորպորատիվ շղաշի

հաղթահարման» դոկտրինը, «ուղղակի» և «հակադարձ», «հորիզոնական» և «ուղղահայց» պատասխանատվության հարցերը:

Պարագրաֆ 2.3.-ում հեղինակը ներկայացնում է իրավունքի չարաշահման և վենչուրային բաժնետիրական ընկերության պատասխանատվության առանձնահատկությունները: Տրվում են իրավունքի չարաշահման ընդհանուր չափանիշները, իրավունքի չարաշահման տարատեսակ դասակարգումներ՝ ըստ իրավունքի չարաշահման ձևի, ըստ կորպորատիվ իրավունքները չարաշահող սուբյեկտի, կախված իրավունքի չարաշահում իրականացնող կորպորատիվ կառավարման մարմնի և այլն: Նկարագրվում են իրավունքի չարաշահման դրսերումները, օրինակ՝ «կորպորատիվ շանտաժ» և «բիզնեսի զավթում»: Այնուհետև հեղինակը ներկայացնում է կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումից պաշտպանության ձևերը, յուրիսդիկցիոն, ոչ յուրիսդիկցիոն, անհրաժեշտ պաշտպանություն:

Պարագրաֆ 2.4.-ում քննարկվում են բաժնետիրական համաձայնագիրը և դրա խախտմամբ պայմանավորված վենչուրային բաժնետիրական ընկերության պատասխանատվության առանձնահատկությունները: Ներկայացվում են բաժնետիրական համաձայնագրերի վերաբերյալ տարբեր երկրների մոտեցումները, համաձայնագրի հատուկ առարկան, այն է՝ բաժնետոմսերով հավաստվող իրավունքների և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման (կամ դրանցից ձեռնպահ մնալու) կարգը: Հեղինակը նկարագրում է այն հարաբերությունները, որոնք կարող են կարգավորվել բաժնետիրական համաձայնությամբ, դրա խախտումները, խախտման հետևանքները, քննադատական վերլուծության են ենթարկում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի առկա կարգավորումները:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք՝ իրականացնելով լայնածավալ հետազոտություն, օգտագործելով տեսական, պրակտիկ բազմաթիվ նյութեր: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակված տասը գիտական հոդվածներում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին:

Այնուամենայնիվ, կարծում եմ, ատենախոսության մեջ առկա են առանձին վիճելի եզրակացություններ: Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը հրավիրել դրանց.

1. Կարծում ենք՝ հեղինակը բավարար չափով չի հիմնավորել՝ ինչու պետք է վենչուրային բաժնետիրական ընկերությունները դիտարկվեն որպես բաժնետիրական ընկերությունների առանձին տեսակ և կարգավորվեն առանձին օրենսդրական ակտով: Վենչուրային գործունեությունը, իհարկե, ունի առանձնահատկություններ, սակայն դրանք բավարար չեն կարգավորումք որակական այլ չափանիշով դիտարկելու համար: Վերջիվեջո՞ւ, առկա են բազմաթիվ այլ գործունեության տեսակներ, որոնք ունեն բավականին մեծ առանձնահատկություններ, բայց դրանց համար օրենսդրությունն առանձին տեսակի բաժնետիրական ընկերություն չի նախատեսել: Օրինակ՝ բանկերը, ապահովագրական ընկերությունները, որոնց պարագայում համապատասխան օրենքներով գուտ նախատեսված են կառավարման և գործունեության առանձնահատկություններ: Բայց նման գործունեության համար ձեռնարկատերը կարող է ընտրել թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ, թե՛ բաժնետիրական ընկերության կազմակերպահրավական ձևը:

2. Շատ հաճախ աշխատանքում նկարագրված են որոշակի հիմնահարցեր, որոնք վերաբերում են ընդհանուրապես բաժնետիրական ընկերություններին: Այսպես, պարագրաֆ 2.2.-ում հեղինակը քննարկում է հսկող անձանց պատասխանատվության առանձնահատկությունները: Պարագրաֆում նկարագրվում են հսկող և հսկվող կորպորացիաների հարցերն ընդհանուրապես, և միայն վերջում է հեղինակը նշում, որ կվայակոչված կարգավորումներն ու կառուցակարգերը կիրառելի են նաև վենչուրային ընկերությունների նկատմամբ: Նույն խնդիրն առկա է նաև պարագրաֆ 2.3.-ում, որտեղ հեղինակը նկարագրում է իրավունքի չարաշահումք կորպորատիվ հարաբերություններում և վերջում եզրակացնում, որ նշված կառուցակարգերը կիրառելի են նաև վենչուրային ընկերությունների համար:

3. Համաձայն լինելով հեղինակի այն ընդհանուր մտքի հետ, որ որոշակի տեսակի գործունեությունների պարագայում (այս դեպքում՝ վենչուրային) օրենսդրությունը հնարավորություն չի տալիս կորպորատիվ ավելի ձկուն կարգավորումներ նախատեսել: Սակայն

խնդրի լուծումը, կարծում ենք, վենչուրային բաժնետիրական ընկերությունների հատուկ տեսակի նախատեսման մեջ չէ, այլ կորպորատիվ հարաբերություններում դիսպոզիտիվության տարրերի ավելացման, ընդ որում ոչ միայն վենչուրային ընկերությունների, այլ ցանկացած տեսակի ոչ հանրային առևտրային իրավաբանական անձանց համար: Այլապես, հեղինակի մոտեցման ընդունման պարագայում այն հիմնադիրները, որոնք կցանկանան ունենալ ավելի ձկուն կորպորատիվ կառուցվածք, ստիպված կլինեն ֆորմալ ձևակերպել իրենց բաժնետիրական ընկերությունը որպես վենչուրային:

4. Որոշակիորեն համաձայն լինելով հեղինակի այն մոտեցման հետ, որ կորպորատիվ պատասխանատվությունը քաղաքացիափական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, այնուամենայնիվ կարծում ենք, որ այս հարցը ենթակա է ավելի խորը ուսումնասիրության: Նման առաջարկի ներկայացումը հետագա շատ լայն սպեկտրի հարցեր է բերում՝ անհրաժեշտ է հստակ նկարագրել, որոնք են այդ առանձնահատկությունները, ինչպես է դրսնորվում մեղքը, ինչ հարաբերակցության մեջ են քաղաքացիափական կորպորատիվ պատասխանատվությունը և այլ սանկցիաները, արդյոք այս պատասխանատվության նկատմամբ սուբյեկտար կիրառվում պայմանագրային, թե արտապայմանագրային պատասխանատվության դրույթները և այլն:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են մեթոդաբանական, բանավիճային բնույթ, և ամենսին չեն ննեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Կարեն Արտակի Մելիքսեթյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների մարմինների համակարգը և պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական,

առեւտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապրանքահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՒՍԱԽՈՍ՝

Ա.Ա. Թավառյան

Դոցենտ, ի.գ.թ.

11.10.2024թ.

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արտեն Աշոտի Թավառյանի ստորագրության իսկությունը հաստատում էմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

դեկան, իրավ. գիտ. դոկտոր,

պրոֆեսոր



Հ.Ա. Խաչիկյան